ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄՅՈՒՆԽԵՆՈՒՄ

Մայիսի 1-ին, ուրբաթ օրը, կեսօրից հետո, ժամը 14-ին, Վեհափառ Հայրապետը Վիեննայից Իր շքախմբով մեկնում է Մյունխեն:

Նորին Սրբությանը Վիեննա, Մյունխեն և Մայնի Ֆրանկֆուրտ, որպես շքախմբի անդամ, ուղեկցում էր նաև Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը՝ մշտապես իր հոգատար մասնակցությունը բերելով հայրապետական ուղևորության բարեհաջող անցկացմանը:

Վիեննայի օդակայանում Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ մաղթելու էին եկել հայ եկեղեցական վարչության անդամները՝ գլխավորությամբ ատենապետ պրն. Աստիկ Աստվածատուրյանի, գաղութի ազգային և բարեսիրական այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ և բազմաթիվ վիեննահայեր:

Հայոց Հայրապետին բարի ճանապարհ մաղթելու էին եկել նաև «Պրո Օրիենտե»-ի նախագահ դոկտ. Փիֆֆըլ Պերչնիչը, ընդհանուր քարտուղար պարոն Ալֆրեդ Շթիրնեմանն ու այլ անդամներ:

Ժամը 15-ին Վեհափառ Հայրապետի ինքնաթիռը վայրէջք է կատարում Մյունխենի «Ռիմ» օդակայանում:

Այստեղ Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել Տ. Արիս եպս. Շիրվանյանը, Բավարիա նահանգի հայոց հոգևոր հովիվ Տ. Հակոբ վրդ. Գրլբենկյանը, Մյունխենի հայ համայնքային վարչության անդամները՝ գլխավորությամբ ատենապետ պրն. Վանիկ Խանչյանի, գաղութային կազմակերպությունների այլ ներկայացուցիչներ և բազում մյունխենաբնակ հայեր

Օդակայանում Հայոց Հայրապետին դիմավորելու և բարի գալուստ մաղթելու էին եկել նաև Մյունխենի Արքեպիսկոպոս կարդինալ Ժոզեֆ Ռացինգերը, լութերական Եկեղեցու պետ Հանզելման եպիսկոպոսը և էկումենիկ բաժնի ներկայացուցիչ դոկտ. Ալբերտ Ռաուխը:

Օդակայան էին եկել նաև բազմաթիվ թերթերի թղթակիցներ, հեռուստատեսության և ռադիոյի ներկայացուցիչներ:

Պաշտոնական հյուրերի ընդունելության սրահում ողջույնի և բարիգալստյան ճառերի փոխանակումից հետո, Վեհափառ Հայրապետը մեքենաների շարասյունով առաջնորդվում է Մյունխենի «Բայերիշըր Հոֆ» հյուրանոց:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄՅՈՒՆԽԵՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Նույն օրը, երեկոյան ժամը 19.30-ին, Վեհափառ Հայրապետը «Բայերիշըր Հոֆ» հյուրանոցի ընդունելությունների սրահում հանդիպում է ունենում մյունխենահայության հետ:

Հանդիպման ժամանակ, հանուն մյունխենահայ հավատացյալ ժողովրդի, Վեհափառ Հայրապետին ողջունում և բարի գալուստ է մաղթում Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը:

Խոսք առնելով, Վեհափառ Հայրապետը հայտնում է Իր ուրախությունը՝ մյունխենահայ Իր զավակներով շրջապատված լինելու համար: Եվ, խոսելով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու մասին, Նորին Սրբությունը նշում է, որ այն աստվածապարգև և սրբազան մի հաստատություն է, որի հովանու ներքո է գտնվում մեր ժողովուրդը ավելի քան 1600 տարիներ: Մեր ժողովուրդը միշտ էլ կարոտ և ծարավ է եղել «ծունկ մը աղոթքի» և առանց Մայր Եկեղեցու այն չի կարող գոյատևել արտասահմանում:

Իր խոսքի ավարտին Վեհափառ Հայրապետը հայրական Իր հորդորներն ու օրհնություններն է բաշխում ներկաներին և աղոթում աշխարհի տեվական խաղաղության համար:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՄՅՈՒՆԽԵՆԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆՈՒՄ

Մայիսի 2-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11.30-ին, Մյունխենի Արքեպիսկոպոս կարդինալ Ժոզեֆ Ռացինգերը կազմակերպել էր մասնավոր ընդունելություն՝ ի պատիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Արքեպիսկոպոսարանի պաշտոնական ընդունելության սրահում Հայոց Հայրապետին հետևյալ ջերմ ճառով ողջունում և բարի գալուստ է մաղթում կարդինալ Ժոզեֆ Ռացինգերը:

«Ձերդ Սրբություն,

Ձատկական այս օրերին ինձ համար մեծ ուրախություն է ողջունել Ձեզ մեզ մոտ: Հայ ժողովուրդը առաջինն ընդունեց քրիստոնեական հավատքը, Ս. Բարթողիմեոս առաքյալի քարոզչությամբ և առավելապես քարոզչական գործունեությամբ Ս. Գրիգոր Լուսավորչի, որը հիմնեց և կազմակերպեց Հայ Եկեղեցին շատ ավելի առաջ, քան այդ մեկ ուրիշ տեղ հնարավոր եղավ: Այսպես, հայերը մուտք են գործում պատմության մեջ իբրև քրիստոնյա ժողովուրդ: Հայ ժողովուրդը քրիստոնյա է, որքան մենք նրան ճանաչում ենք պատմությունից: Նրա մշակույթը կրում է քրիստոնեական ժառանգության դրոշմը: Հայ գրականության հիմնադիրը եղել է հայ գրերը ստեղծող Ս. Մեսրոպ Մաշտոցը: Քրիստոնյա հայ ժողովուրդը ապրել է հզորության և քաղաքական անկախության ժամանակներ, սակայն նա ապրել է նաև ճնշումի և ավերածության ժամանակներ:

Անցյալի բազմատեսակ այդ փորձությունները ազդեցին, որ այս ժողովուրդը իր մեջ զարգացնի գոյատևության ուժը, որը մեզ հիացմունք է պատճառում: Հայերը իրենց ջանասիրությամբ, խելամտությամբ և աշխատասի-

թությամբ ամբողջ աշխարհում անուն շահեցին: Գաղթից և հալածանքից հետո կյանքի նոր ուղիներ հարթեցին և կրկին բարեկեցության և հոչակի հասան մարդկային մշակույթի բոլոր ասպարեզներում: Նրանք շոշափելի նպաստ են բերում իրենց հյուրընկալ երկրների զարգացման ու բարեկեցիկ կյանքի ստեղծման գործում: Հայերը հավատարիմ քաղաքացիներն են դարձել վաղուց իրենց հյուրընկալող երկրների՝ առանց հրաժարվելու, սակայն, իրենց ազգային և կրոնական ժառանգությունից:

Վերոհիշյալ պատճառներով մեր երկիրն են եկել շատ հայեր: Նրանք այսօր ուրախ են մեզ հետ Ձեզ իբրև իրենց Հայրապետ ողջունելու»:

Այնուհետև պատասխան շնորհակալական և բարեմաղթության խոսքով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը:

Ապա, ի պատիվ Նորին Սրբության Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, տեղի է ունենում ճաշկերույթ, որին ներկա էին Տ. Նարեկ եպս. Շաբարյանը, Տ. Արիս եպս. Ցիրվանյանը, Տ. Մեսրոպ Ծ. վրդ. Գրիգորյանը, Տ. Հակոբ վրդ. Գրլընճյանը, Տ. Զատիկ աբդ. Ավետիքյանը, հայ եկեղեցական վարչության ատենապետ պրն. Վանիկ Խանջյանը, Գերմանական Կաթոլիկ Եկեղեցու էկումենիկ բաժնի վարիչ դոկտ. Ալբերտ Ռաուխը և այլ հոգևորական ու աշխարհական ներկայացուցիչներ:

Ընդունելությունն անցնում է քրիստոսավանդ եղբայրական սիրո ջերմ մթնոլորտում:

Ճաշկերույթի վերջում Հայոց Հայրապետի և կարդինալ Ռացինգերի միջև փոխանակվում են հուշանվերներ:

ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ Ս. ԱՆՆԱ ՏԱՃԱՐՈՒՄ

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, Մյունխենի կաթոլիկ Եկեղեցու Ս. Աննա շքեղ տաճարում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է Կիրակամտի հանդիսավոր ժամերգություն, որին ներկա էին հարյուրավոր հայ հավատացյալներ և քույր Եկեղեցիների բազմաթիվ ներկայացուցիչներ:

Ժամերգության ավարտին «Փառք քեզ Աստուած, փառք քեզ, յաղագս ամենայնի Տէր, փառք քեզ» մաղթանքի բնաբանով քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը՝ մխիթարելով ներկա հայ հավատացյալ ժողովրդին:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամը 19.30-ին Բավարիայի Հայ Հայրենակցական Միության հրավերով Վեհափառ Հայրապետը այցելում է Միության ակումբ՝ բաշխելու համար Իր օրհնությունը Միության անդամներին և ներկաներին:

Ընդունելության ժամանակ, հանուն Միության բոլոր անդամների, Վեհափառ Հայրապետին ողջունում և բարի գալուստ է մաղթում ատենապետ պարոն Արման Գուրյանը:

Նորին Սրբությունը, խոսելով սիրո, եղբայրական միության և համերաշխ միասնության գաղափարի մասին, շեշտում է, որ հայ ժողովրդի միասնությունը, արտասահմանում մանավանդ, միմիայն Հայ Եկեղեցիով կարող է կենսագործվել, ամենայն հայոց Ս. Էջմիածնի օրհնությամբ:

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՆԽԵՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԸ

Նույն օրը, ժամը 20.30-ին, «Բայերիշըր Հոֆ» հյուրանոցի ճաշասրահում Հայ Բարեգործական Ընդհանուր Միության Մյունխենի մասնաճյուղը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, կազմակերպում է ճաշկերույթ:

Սեղանի շուրջ հակիրճ խոսքով Նորին Սրբության ներկայությունը սրտանց ողջունում է Միության ատենապետ պարոն Հակոբ Ազարյանը:

Ընդունելության վերջում օրհնության Իր խոսքն է ասում Վեհափառ Հայրապետը՝ հաջողություններ մաղթելով Միության բոլոր անդամներին և ատենապետ պարոն Հակոբ Ազարյանին՝ իրենց ազգօգուտ գործունեության ճանապարհին, ընդգծելով Հ. Բ. Ը. Միության կատարած ազգանվեր մեծ դերը իր հիմնադրման օրից մինչև մեր օրերը:

Ընդունելությունն ավարտվում է Հայոց Հայրապետի «Պահպանիչ»-ով:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ Ս. ԹԵԱՏԻՆՅԱՆ ՏԱՃԱՐՈՒՄ

Մայիսի 3-ին, կիրակի.—Աշխարհամատրան (Կանաչ Կիրակի).

Այսօր, առավոտյան ժամը 10.30-ին, Վեհափառ Հայրապետը Մյունխենի կաթոլիկ Ս. Թեատինյան տաճարում մատուցում է հանդիսավոր ս. պատարագ, որին ներկա էին հազարավոր հայ և օտար հավատացյալներ, ինչպես նաև քույր Եկեղեցիների բազմաթիվ ներկայացուցիչներ:

Ս. պատարագին ներկա էր նաև Մյունխենի Արքեպիսկոպոս կարդինալ Ժոզեֆ Ռացինգերը:

«Հայր մեր»-ից առաջ Նորին Սրբությունը ոգեշունչ քարոզ է արտասանում՝ մխիթարելով ներկա հավատացյալներին: Նորին Սրբությունը Իր խոսքի մեջ շեշտում է, որ այսօր ավելի քան երբեք տառապող մարդկությունը կարիքն ունի գերագույն ճշմարտության և արդարության, սիրո և խաղաղության, որոնք բաշխվում են Քրիստոսի հարության կենսահաստատ շնորհներով:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նույն օրը, կեսօրից հետո, ժամը 13.30-ին, Մյունխենի համայնքային վարչությունը, տեղի Արվեստի տան սրահում, կազմակերպում է ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Ընդունելությանը ներկա էին Մյունխենի Արքեպիսկոպոս կարդինալ Ժոզեֆ Ռացինգերը, Գերմանիայի Կաթոլիկ Եկեղեցու էկումենիկ բաժնի ներկայացուցիչ դոկտ. Ռաուխը, Բավարիայի Լութերական Եկեղեցու ավագ դեկան Օտտո Շտայները, Բավարիայի Ավետարանական Եկեղեցու ներկայացուցիչ և էկումենիկ բաժնի վարիչ պատվելի դոկտ. Ռաթցը, Տ. Նարեկ եպս. Շաքարյանը, Տ. Արիս եպս. Շիրվանյանը, Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը, Տ. Հակոբ վրդ. Գըլընճյանը, Տ. Զատիկ աբդ. Ավետիքյանը, Մյունխենի եկեղեցական վարչության անդամները՝ ատենապետ պրն. Վանիկ Խանջյանի գլխավորությամբ, ազգային տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, զանազան քաղաքներից ժամանած համայնքային և գաղութային վարչությունների այլ անդամներ և բազմաթիվ մյունխենաբնակ հայեր՝ շուրջ 250 հոգի:

Ճաշկերույթի ընթացքում Վեհափառ Հայրապետին ուղղյալ ողջույնի խոսքեր են արտասանում Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը, Մյունխենի Արքեպիսկոպոս կարդինալ Ժոզեֆ Ռացինգերը, Մյունխենի հայ եկեղեցական վարչության ատենապետ պրն. Վանիկ Խանջյանը, Բավարիայի հոգևոր հովիվ Տ. Հակոբ վրդ. Գելլենճյանը, Հ. Բ. Ը. Միության Մյունխենի մասնաճյուղի ատենապետ պրն. Հակոբ Ազարյանը, Մյունխենի հայկական հարցերի ինստիտուտի աշխատակից տիկին Ալիս Մարուխյանը և ուրիշներ: Բոլոր արտահայտվողներն էլ հայտնում են իրենց ուրախությունը, որ Հայոց Հայրապետի այցելությունը մի կարևոր ազդակ հանդիսացավ Արևմտյան Գերմանիայի հայ գաղութի հետագա կազմավորման ու ծաղկման համար:

Ընդունելության ընթացքում կատարվում է նաև հետևյալ գեղարվեստական ծրագիրը:

Երգչուհի Ժանեթ Գազանճյանը կատարում է «Գետակի վրա», «Իմ երգ», «Երևան դարձած իմ Էրեբունի» և «Կարմիր գինի» ստեղծագործությունները:

Հովհ. Շիրազի «Սպիտակ ջարդ» բանաստեղծությունը արտասանում է Միհրան Գրիգորյանը, իսկ Արման Զաքարյանը՝ Վ. Թեքեյանի «Հարության շունչն է սահա» բանաստեղծությունը:

Ճաշկերույթի վերջում օրհնության խոսքով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՄՅՈՒՆԽԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻՆ

(3 մայիսի 1981 թ.)

Սիրելիներ, Իմ խոսքը պետք է կրկին սկսիմ գոհության խոսքով: Այսօր սր. պատարագին միասին աղոթեցինք երբ ձեզմե ամեն մեկը իր սիրտը բացավ Աստուծո առջև, իր ուխտը կատարեց և իր աղոթքը, որ իր ազնիվ սպասումները հաջողությամբ պսակվին կյանքի ճանապարհի վրա: Ես հատկապես աղոթեցի աշխարհի խաղաղության համար, մեր կյանքի խաղաղության համար, մեր հայկական կյանքի ներքին միասնության համար: Աղոթեցի նաև, որ Տերը զորավիգ մնա մեր ազգին ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, որպեսզի քայլ առ քայլ կարողանանք բուժել մեր հին և խոր վերքերը, քայլ առ քայլ հառաջդիմել մեր ազգային մշակույթի զարգացման համբուն վրա, և նաև՝ որ Հայաստանի և արտասահմանի հայերը միասնաբար մտածեն ու գործեն:

Ես իբրև կաթողիկոս հետզհետե ավելի հստակ կերպով գիտակցեցի, որ մեր ազգի բոլոր երազանքների իրականացումը կախում ունի մեր երկրի սահմաններու վրա խաղաղության պահպանումեն: Հեռո՛ւ մեզմե և մեր վերածնված հայրենիքեն ամեն տեսակ պատերազմ: Մեր երկրի սահմաններու անվտանգությունը, մեր երկրի ժողովրդի կյանքի ապահովությունը գերագույն հրամայականն է մեզի համար այսօր և վաղը: Հատկապես արտասահմանի հայությունը, պետք է պայծառ գիտակցությունը ունենա անցյալի տխուր փորձառություններուն, պետք է պայծառ գիտակցությունը ունենա մեր հայրենիքի աշխարհագրական դիրքին, և պայծառ գիտակցություն ունենա նաև իր սեփական ուժերու, իր սեփական առարկայական հնարավորություններուն: Այս երեք հիմնական տվյալները մեզի հստակ կեր-

պով ցույց կուտան անհրաժեշտությունը խաղաղության պահպանման աշխարհի վրա և հատկապես՝ հազիվ մահվան անդունդեն փրկված մեր հայրենիքի սահմաններու վրա:

Ահա Իմ ամենօրյա աղոթքը այնտեղ, Էջմիածնի մեջ: Նաև իմ խղճի խոսքն է այս, որ կուզեմ ուղղել բոլորին, այն վստահությամբ, որ ամեն հայ մարդ լավ կհասկնա Ինձ:

Երբ ծրագիրը կկազմվեր Էջմիածնի մեջ Իմ այս ճանապարհորդության, քիչ մը տարակուսանքի մեջ էինք. արդյոք Գերմանիա երթա՞լ, թե՞ չերթալ: Կարծիք կար, որ Գերմանիոր համայնքները տակավին լավ կազմակերպված չեն, հայոց եկեղեցական վարչությունները երերուն վիճակի մեջ են, ներքին անհամաձայնություններ կան... և այլն: Բայց այնուամենայնիվ ահավասիկ Ես եկա և շատ գոհ եմ որ եկա: Ես մտածեցի, եթե իսկապես այդպիսի երերուն, անկայուն վիճակ կտիրե այստեղ հայ կյանքեն ներս, ուրեմն ավելի ևս պարտավոր եմ երթալ, որպեսզի Իմ խոսքով, Իմ հորդորներով վերականգնվի մեր զավակներու համերաշխությունը և անոնք բոլորը ձեռք-ձեռքի տված ապրին, կազմակերպվին, գոյատևեն այս հյուրընկալ գեղեցիկ երկրին մեջ: Եվ ահավասիկ, այսօրվա ձեր հավաքույթը այդ միասնությունը կարտահայտե:

Ես կխնդրեմ բոլորեդ, որ այսօրվան հավաքույթը սկզբնավորություն մը ըլլա և, գոնե կարևոր առիթներով, այդ միասնությունը արտահայտվի: Անշուշտ, շատ բնական է, ամեն կազմակերպություն, ամեն միություն իր ծրագիրը ունի, իր նպատակները, մեկը մյուսեն կտարբերի, բոլորն ալ իրենց գոյության իմաստը ունին, հետևաբար, չեն կրնար ամբողջական իմաստով իրար միանալ, մեկ միասնություն մը կազմել. դա հնարավոր չէ և իմ կարծիքով՝ ցանկալի ալ չէ: Բայց եկեղեցական համայնքը տարբեր է, այն ամբողջ հայության կպատկանի, եկեղեցի է և ո՛չ մեկ հայ եկեղեցիեն դուրս չի կրնար ըլլալ և կամ անտեսվիլ: Սակայն Իմ իղձն է և Իմ հրավերը ուղղել ձեզի բոլորիդ, որ գոնե տարին քանի մը անգամ համազգային բնույթ կրող հանդիսությունները միասին կազմակերպեք: Եվ արդեն այդ հանդիսությունները, կրնամ ըսել, արդեն պատմականորեն նվիրագործված են, ինչպես Վարդանանց տոնն է, հայ մշակույթի կամ Թարգմանչաց տոնը, Եղեռնի, անշուշտ, հիշատակը և Սարդարապատի հաղթանակը: Այս չորս հանդիսությունները, Իմ փափագն է, որ, գոնե այս չափով և այս ձևով արտահայտի ամբողջական միասնությունը ձեր հայկական այս փոքրիկ բայց սքանչելի գաղութի մեջ:

Հիշեցի մեր մեծ Եղեռնը և Սարդարապատը: Եղեռնի մեր ազգային մեծ վիշտը, անմոռանալի վիշտը: Ոմանք կըսեն մեզի՝ մոռնանք: Սակայն Տեր Աստված, ինչպես հնարավոր է մոռնալ այն ահավոր ողբերգությունը, որ մեր ժողովրդի կյանքի բաժինը եղավ 1915—16 սև տարիներուն: Մենք չենք կրնար մոռնալ մեր նահատակները և անոնց ուխտը: Չենք կրնար մոռնալ նաև Սարդարապատի փրկարար հաղթանակը՝ հիմնաքարը հայոց նոր պետականության: Ահա այն երկու խարիսխ զգացումները, որոնց վրա կհենվի մեր այսօրվա կյանքը և որոնց վրա կհենվին նաև մեր ապագայի բոլոր երազանքներու իրականացումը:

Այս երկու խարիսխ զգացումներով կլուսավորվի այսօր հայ ժողովրդի գիտակցությունը, այն կկազմավորվի, կաճի, կզորանա և Մենք ձեզի կվըստահեցնենք, որ նույն այս երկու խարիսխ զգացումները հզորապես կենդանի են, Հայաստանի ձեր քույրերու և եղբայրներու սրտերուն մեջ: Եվ

այդ գիտակցությամբ է, որ ամեն հաչ, նայելով Արարատին, տեսիլքը ունի մեր ապագա հաղթանակներուն:

Սիրելիներ, ամուր հավատքով և մեր սեփական ուժերու գիտակցությամբ լեցուն և մեր ապագայի սպասելիքներով խանդավառ, ձեռք-ձեռքի տված աշխատինք Մենք Հայաստանի մեջ, դուք այստեղ, գուցե երբեմն տարբեր բանաձևումներով, կարևորը հիմնական նպատակն է, որով մենք ամենքս, հայաստանցիներ և արտասահմանցիներ, զգանք մեզ միացած, զգանք մեկս մյուսին գործակից եղբայր, հետզհետե ավելի զորացնելով արդի Հայաստանի հիմքերը, հետզհետե առավել պայծառացնելով հայրենասիրական գիտակցությունը, մեր ազգը տակավին ըսելիք պիտի ունենա այս աշխարհին:

Ճիշտ է, մեր սուրբ Եկեղեցին և Էջմիածինը ամեն բանե առաջ կրոնական հաստատություն են և հավատարիմ կմնան իրենց հոգևոր քրիստոնեական առաքելության, այդ մեր հիմնական պարտականությունն է, բայց զուգահեռ մենք չենք կրնար հեռու մնալ մեր ժողովրդի ազգային զգացմունքներեն, ազգային երազանքներեն և ազգային հեռանկարներ հետապնդելու աշխատանքեն: Մի՛ մոռնաք, որ այնտեղ է, Էջմիածնի տաճարի շուրջ, բազմաթիվ հանգուցյալ կաթողիկոսներու գերեզմանը: Անոնց մեջ կա գերեզման մը, որ համեմատաբար ամենեն շատ իր վրա ծաղիկներ կկրե: Եվ ամենեն շատ անցորդները՝ հայերը, կանգ կառնեն և ծունկ մը աղոթք կարտասանեն: Այդ Խրիմյան Հայրիկի գերեզմանն է: Իմ համեստ ուժերով և Իմ հնարավոր միջոցներով, Ես այնտեղ կփորձեմ հավատարիմ մնալ մեր Մեծ Խրիմյան Հայրիկին, որ խորհրդանիշն է մեր ժողովրդի հայրենասիրական փոթորկումներուն վերջին հարյուր տարիներու ընթացքին:

Ահավասիկ, այսօրվան Հայոց Հայրապետը, որ ձեր առաջ Իր սիրտը բացավ: Ան շուտով կհեռանա ձեզմե, Իր օրհնությունը թողնելով ձեզի ամենքիդ: Թող Աստված միշտ խաղաղության և բարգավաճ ճանապարհի վրա պահպանե այս երկիրը, ուր կբնակիք, Գերմանական Հանրապետությունը, և դուք, հայկական համայնքներ և տարբեր միություններ՝ այս երկրի մեջ, շարունակեք ձեր հայաշունչ գործունեությունը միշտ նույն գերագույն նպատակները հետապնդելով: Ձեզ բոլորիդ բարի հաջողություններ և սրտագին բարի մաղթանքներ: Մեր բարի մաղթանքները նաև եկեղեցական վարչության, որ մեր հայրապետական պատվիրակ հոգեշնորհ Մեսրոպ ծ. վարդապետի նախագահության ներքո, սկսած է նոր շրջան մը բոլորել, կազմակերպելու համար ոչ միայն այս քաղաքի, այլ նաև Գերմանիո մյուս քաղաքներու կրոնական համայնքները: Ձեզի սիրելի հայր սուրբ, և ձեր բոլոր գործակիցներուն Մեր օրհնությունը:

Ես կուզեի գնահատանքի խոսք մը ավելցնել նաև ուղղյալ մեր երիտասարդ վարդապետին, Հակոբ վարդապետին, որ Ս. Էջմիածնի մեջ իր վարքով, բարքով, իր ուսման ընթացքով օրինակելի եղավ, և այժմ կտեսնեմ, որ այստեղ ալ ձեր բոլորիդ համակրանքը կվայելե: Ապրի՛ս հայր սուրբ:

Սիրելիներ և հարազատներ Մեր, բաժանումի այս հուզիչ պահին կթողում ձեզի բոլորիդ Իմ սիրտը, Իմ գնահատանքը և Իմ օրհնությունը:

Մնացեք բարով զորացյալ Սուրբ Հոգով:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԲԱՎԱՐԻԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏԱՐԱՆ

Մայիսի 4-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Հայոց Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Բավարիայի վարչապետա-

բան, որտեղ ընդունվում է վարչապետի տեղակալ և արդարադատության մինիստր դոկտ. Հիլլերմայերի կողմից:

Նորին Սրբության և մեծարգո պարոն վարչապետի միջև, ճառերի փոխանակումից հետո, տեղի է ունենում հյուրասիրություն և հուշանվերների փոխանակում:

ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՏԱՃԱՐՈՒՄ

Նույն օրը, երեկոյան ժամը 18.30-ին, Հայոց Հայրապետը, Մյունխենի ավետարանական Եկեղեցու պետ գերապատիվ Հանզելման եպիսկոպոսի հրավերով, տեղի Ս. Հարություն տաճարում ներկա է լինում երեկոյան հատուկ ժամերգության:

Արարողության ընթացքում, քարոզի պահին, Հայոց Հայրապետի ներկայությունը ողջունում է հետևյալ ջերմ խոսքով Հանզելման եպիսկոպոսը և հրավիրում Նորին Սրբությանը՝ տալու Իր օրհնությունը:

«Բավարիայի լութերական-ավետարանական Եկեղեցու, Գերմանիայի միացյալ լութերական-ավետարանական Եկեղեցու և Լութերական Միության Խորհրդի կողմից ներկայացնում ենք Ձերդ Սրբությանը մեր անկեղծ ողջույնները: Ձեր այցելությունը ընդգծում է մեր Եկեղեցիների միջև գոյություն ունեցող սրտագին հարաբերությունները: Ձեր Եկեղեցու նկատմամբ մեր համակրանքը և աճող հետաքրքրությունը վերաբերում է հավասարապես ինչպես նրա ներկային, այնպես էլ նրա պատմական անցյալին, մինչև առաքյալների ժամանակաշրջանը:

Մենք գիտենք Հայ Առաքելական Եկեղեցու բազում ծանր հալածանքների, պայքարների մեջ կերտված տառապալի ճակատագրի մասին:

Ձեր Եկեղեցու գոյությունը այսօր իբրև հնագույն ժողովրդական Եկեղեցի ինչպես Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունում, այնպես էլ համատարած սփյուռքում հաստատում է այն ճշմարտությունը, որ մարտիրոսների արյունը սերմն է Եկեղեցու:

Պատմության այս ֆոնի վրա մեր հանդիպումը Ձերդ Սրբության հետ դառնում է նշանակալի էկումենիկ միջադեպ, իբրև նշան Աստուծո տիեզերական Եկեղեցու»:

Հայոց Հայրապետը «Զի՞ բարի է և զի՞ վայելուչ, զի բնակեն եղբարք ի միասին» սաղմոսի բնաբանով օրհնության Իր քարոզում խոսում է քրիստոնեական սիրո և խաղաղության մասին, գաղափարներ, որոնք մեր ժամանակների համար մեծագույն հրամայականներն են Եկեղեցիների և ժողովուրդների կյանքում:

*
* *

Նույն օրը, ժամը 20-ին, Հանզելման եպիսկոպոսը, ի պատիվ Հայոց Հայրապետի, Մյունխենի «Տուայ Լյովեն» հյուրանոցի ռեստորանում կազմակերպում է ճաշկերույթ, որին ներկա են լինում քույր Եկեղեցիների բազմաթիվ ներկայացուցիչներ:

*
* *

Մայիսի 5-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11.30-ին, Վեհափառ Հայրապետը հյուրանոցի Իր հարկաբաժնում ընդունում է այցելությունը Մյունխենի հայ եկեղեցական վարչության անդամների՝ գլխավորությամբ ատենապետ Վանիկ Խանջյանի:

Նորին Սրբությունը, ողջունելով բոլորին, մաղթում է, որ նրանք շարունակեն իրենց արդյունավետ գործունեությունը՝ ի բարօրություն համայնքի ազգային-եկեղեցական կյանքի, բոլոր հայերին համախմբելով եկեղեցու շուրջ, միասնական ոգով:

Վերջում բոլոր ներկաները Վեհափառ Հայրապետից աջահամբույրով ստանում են նվերներ: